# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ու Մ

---

**20 հոկտեմբերի 2014 թվականի N 106-Ա**
**ք. Աշտարակ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 159-Ա հրամանը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել 2014 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2014թ. հոկտեմբերի 20-ի թիվ 106-Ա որոշման

2014 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| **հ/հ** | **Համայնքի անվանում** | **Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը** | **Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ** | **Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք** | |
|---|---|---|---|---|---|
| | | | | **Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)** | **Անուն, ազգանուն** |
| 1 | Օհանավան | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ,<br>4.Արտակարգ իրավիճակների բնագավառ,<br>5. Պաշտպանության բնագավառ | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՍՏՁ վարչության գլխավոր մասնագետ<br>2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և ապահպանության վարչության ավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ<br>5.Զորահավաքայիննախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան<br>5.Լ.Գրիգորյան |
| 2 | Ջրամբար | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ, 3.Արտակարգ իրավիճակների բնագավառ, | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՍՏՁ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Վ.Աբգարյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3. Լ.Գրիգորյան |
| 3 | Մելիքգյուղ | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ,<br>4.Արտակարգ իրավիճակների բնագավառ,<br>5. Պաշտպանության բնագավառ | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՍՏՁ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ<br>5. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան<br>5.Լ.Գրիգորյան |
| 4 | Վարդաբլուր | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ, | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՍՏՁ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան<br>5.Լ.Գրիգորյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 4.Արտակարգ իրավիճակների բնագավառ,<br>5. Պաշտպանության բնագավառ | նախապատրաստության բաժնի պետ<br>5. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | |
| 5 | Գառնահովիտ | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ,<br>4.Արտակարգ իրավիճակների բնագավառ, | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՄՏԶ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան |
| 6 | Լուսակն | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ,<br>4.Արտակարգ իրավիճակների բնագավառ, | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՄՏԶ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան |
| 7 | Սորիկ | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ, 4.Արտակարգ իրավիճակների բնագավառ, | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՄՏԶ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան |
| 8 | Հակո | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ,<br>4.Արտակարգ իրավիճակների բնագավառ, | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՄՏԶ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան |
| 9 | Ոսկեհատ | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ, 4.Արտակարգ իրավիճակների բնագավառ,<br>5. Պաշտպանության բնագավառ | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՄՏԶ վարչության գլխավոր մասնագետ 2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Զորահավաքային նախապատրաստության բաժնի | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան<br>5.Լ.Գրիգորյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | պետ<br>5. Ջրահավաքային նախապատրաստության բաժնի պետ | |
| **10** | Կոշ | 4-րդ եռամսյակ | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության բնագավառ,<br>2.Հողօգտագործման բնագավառ,<br>3.Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ,<br>4.Արտակարգ իրավիճակների բնագավառ,<br>5. Պաշտպանության բնագավառ | 1.ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, ՖՍՏԶ վարչության գլխավոր մասնագետ<br>2. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ<br>3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>4. Ջրահավաքային նախապատրաստության բաժնի պետ<br>5. Ջրահավաքային նախապատրաստության բաժնի պետ | 1.Ա.Կարապետյան, Կ.Ժամհարյան<br>2. Գ.Օհանյան<br>3.Լ.Մնացականյան<br>4. Լ.Գրիգորյան<br>5.Լ.Գրիգորյան |

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**